

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ՝
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԷՆ

Երբեք մի՛ ունենա՛ք խորդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են, այլ՝ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիքներով՝ ծաղկելով առաքինասէր վարժով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանզի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեւանը կ'ըլլամք երկրի վրայ, որովհետեւ բոլոր սիրամեկներու եւ առաքինութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ հոգիի եւ մարմինի սրբութիւնն է:

Ամենայն արդարութեան եւ արիութեան թագը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է: Երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծարանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

**ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ
ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ**

Երկնաւոր թագաւոր, տո՛ւր ինձի՛ Քու արքայութիւնդ՝ գոր Քեզ սիրողներուն խոստացար եւ զօրացո՛ւր իմ սիրտս, որպէսզի մեղքը ատեմ եւ միայն Քե՛զ սիրեմ եւ Քո՛ւ կամքդ կատարեմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՛ քազմամեղիս:

ԼՈՒՍԱՐԱՐ

Լուսարարին դերը շատ կարեւոր է եկեղեցական մեր կեանքին մէջ, յատկապէս լուր օրերուն, երբ դպիրներու բացակայութիւնը զգալի կ'ըլլայ, ինքն է որ սաղմոսներն ու փարոզները կը կարդայ, բուրվառ կ'ընէ եւ կը սատարէ արարողութեանց ընթացքին իր անիշական ծառայութիւնը:

Լուսարարներ պարտին նաեւ ֆաջածանօթ ըլլալ մեր ծիսակարգին, լաւագոյնս կատարելու համար իրենց պարտականութիւններն ու պարտաւորութիւնները:

Մեր հոգեւոր կեդրոններուն մէջ, ուր ծիսական արարողութիւնները մասնաւոր հոգատարութեամբ կը կատարուին, եկեղեցական յատուկ արարողութիւններ տեղի կ'ունենան, ինչպէս՝ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն, Միւռնօրհնութիւն, եկեղեցւոյ սպասներու նոխարութիւնն ու անոնց ինամքը մասնաւոր հսկողութիւն եւ հետապնդում կը պահանջէ, միաբան հայրերէն մին (Երուսաղէմի պարագային Եպիսկոպոս) լուսարարապետի պաշտօն կ'ունենայ, որ կարեւոր հանգամանք մըն է Ս. Աթոռներէն ներս:

â Լուսարարապետն է, որ կը տնօրինէ եւ կը ղեկավարէ արարողութեանց պատշաճ կատարումը:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ](#) [jcrak](#) [Նրազ թերթ](#)



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՍ ՂՑԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՂԻ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՂՅՍ
(Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

ԹԻՒ 38

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 14. 3-17: Բ. Կր. 10.18-11.10:
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 10.1-12

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 10.1-12

Յիսուս Կափառնայումէն Հրեաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խոռոն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցան, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ո՞րք մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»:

Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»:

Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թողթ տալ կնոջ եւ արձակել զայն»:

Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. «Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ռեւէ մէկը թող չբաժնէ անոնք, որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

ԻՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՀԵՌՈՒ ԿԸ ՊԱՃԷ ԶԱՐԻՔԸ

Եթէ Իմաստութիւնը միշտ ներկայ ըլլայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ համար օգտակար նկատես, այն ատեն բարի խորհուրդները քեզ պիտի պահեն եւ մաքուր մտածումները քեզ պահպանեն, որպէսզի քեզ փրկեն չար ֆանապարհէն եւ նենգամիտ մարդէն: Վա՛յ անոնց, որոնք ուղիղ ֆանապարհը թողած՝ իսլաւ ֆառքներէ կը փախն, որոնք կ'ուրախանան չարիք գործելով եւ կը խնդան դէպի չարը խոտորելով: (Առակ Բ. 10-14)

ՄԱՍԱ ԵԳՆԱԻՐ

Ծնունդով կեսարացի էր, իսկ սնունդով եւ կրթութեամբ՝ Պափղագոնիոյ Գանգր քաղաքէն: Որդին՝ աննշան ծնողի մը, որոնք՝ այր եւ կին, բանտարկուած էին իբրեւ քրիստոնեաներ, Աւրելիանոսի հալածանքի ատեն: Հայրը մեռաւ բանտին մէջ, իսկ մայրը՝ իր գաւազը ծնելէն քիչ յետոյ: Նորածինը որդեգրուեցաւ քրիստոնեայ տիկնոջ մը կողմէ, որ սնուցանեց զինք եւ հոգածու եղաւ անոր քրիստոնեական կրթութեան: Մամա, որ դպրոցին մէջ իսկ ուշադրութիւն գրաւեց հեթանոս աշակերտակիցներուն առջեւ միշտ կոպաշտութեան հակառակ խօսելուն համար, տասնըմէկ տարեկան հասակին տարուեցաւ հալածանքի դատարան եւ հրաշալի կերպով միայն ազատելով հրկիզուելու եւ ծովամոյն ըլլալու տանջանքներէն, ապաստանեցաւ Արգէոս լեռը, ուր հովուական կենցաղի մէջ անապատային ճգնութեան կեանք մը ապրեցաւ: Այնքան անոյշ էր ձայնը, որ վայրենի գազանները ողորուած կը մօտենային իրեն: Եղնիկները իր խրճիթին մէջ կամ խովը կը ծնէին իրենց ձագերը: Իր համբարը տարածուեցաւ, թէեւ ոմանք կախարդի գործ նկատեցին իր արարքները, բայց հետզհետէ բազմացաւ իր շնորհիւ քրիստոնեայ եղողներուն թիւը: Այս պատճառաւ, ձերբակալուելով կեսարիա տարուեցաւ, եւ մատուցուեցաւ ծանր տանջանքներու:

Իր համարձակ պատասխաններովը ապշեցուց դատաւորները: Անվնաս ազատեցաւ բոլոր տանջանքներէն, որոնց մատուցուեցաւ: Կրկեսին մէջ գազանները մօտեցան միայն իրեն եւ հեռացան՝ նոյնպէս: Ամբոխը քարկոծեց զինք, բայց ան մնաց կենդանի: Ի վերջոյ, մեռաւ երեքօրեայ նիգակի մը հարուածներուն տակ, միշտ գոհ եւ գուարթ սիրտով: Իր անուան եկեղեցիներ կանգնեցան կեսարիոյ մէջ, Կ. Պոլիս եւ այլուր:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ինչո՞ւ համար Աւետարան կարդացած ատեն մոռնա՞ր կը բռնենք ու կը խնկարկենք

Օրէնքի խորհուրդ է, որովհետեւ երբ Աստուած Սինա լեռան վրայ իջաւ, որոտումներ, փայլակատումներ, փողերու հնչումներ եւ ծուխեր եղան, եւ Մովսէսի միջոցաւ Իսրայէլացիներուն տուաւ օրէնքը: Նոյնպէս, Նոր Ուխտի օրէնքը կը նկարագրէ, օրթի, պոստիւսմէ, բուրվառի ձայնը՝ փողերու հնչումներուն խորհրդանիշ, մոռնա՞րը՝ հուրի, խուճկը՝ ծուխի, սարկաւազը՝ որ Մովսէսի խորհրդանիշն է, նախ ծածկաբար քահանային դիմաց կը կարդայ եւ անկէ սորվելով, կը դառնայ դէպի ժողովուրդը ու բարձրաձայն կը կարդայ: Աւարտելէն ետք ժողովուրդը կրկին անգամ Աստուծոյ փառք կու տայ, որ Իր կամքը յայտնեց մարդոց:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՈՒՆԻՍ ՔՐԻՍՏՈՍԱՊԱՐԳԵԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

«Խաղաղութիւն կը թողում ձեզի»: Պատահական խաղաղութեան մասին չէ խօսքը: Քրիստոսի մեզի ձգած խաղաղութիւնը նոյնինքն իր խաղաղութիւնն է. «Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի»: Այո, իր սեփական խաղաղութիւնն է, իր սրտի խաղաղութիւնն է որ տուած է մեզի: Քրիստոսապարգէի խաղաղութեամբ միայն կրնանք յաղթականօրէն բարձրանալ կեանքի բարձրագոյն Գողգոթաները: Քրիստոսապարգէի խաղաղութեամբ միայն կրնանք ներում շնորհել մեր ձեռքերն ու ոտքերը խաչողներուն: Առանց Քրիստոսապարգէի խաղաղութեան, երբ կեանքի ծովը ալեկոծի՝ անոր հետ միասին մեր ներքին աշխարհն ալ կ'ալեկոծի, իսկ եթէ ունինք մեր սրտին մէջ Քրիստոսի խաղաղութիւնը, պիտի նմանինք այն թռչունին, որ հանգիստ մը նստած է ժայռին մէջ բացուած փոսին մէջ իր ձագուկներուն հետ միասին, երբ անդին տեղատարափ անձրեւն ու անակնկալ կայծակներն ու որոտումները կը ցնցեն աշխարհը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ունի՞ս յիշեալ թռչունին խաղաղութիւնը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԱՆԻՐԱՎՈՒՂԾ ԵՍ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐԿԱ՛՛. ՍԱՂՄՈՍ 35

Դէ՛մ դիր, ո՛վ Տէր, անոնց՝ որոնք ինծի կ'ըդիմանան. կոուէ՛ հետը անոնց՝ որոնք ինծի դէմ կը կոուին: Առ գրահդ եւ ասպարդ եւ փութա՛, օգնէ՛ ինծի: Վերցո՛ւր նիգակդ եւ տապարդ՝ զիս հալածողներուն դէմ, եւ վստահեցո՛ւր զիս, ըսելով. «Քու փրկութիւնդ ես եմ» Թող ամօթով մնան ու խայտառակուին անոնք, որ ինծի չարիք կը նիւթեն: Տիրոջ հրեշտակը թող փախուստի մատնէ զանոնք, ինչպէս յարդը՝ հովէն քշուած: Անոնց նամբան խաւա՛ր ու սայթափուն թող ըլլայ, երբ Տիրոջ հրեշտակը հալածէ զիրենք, որովհետեւ՝ առանց պատճառի ինծի համար թակարդ լարեցին, առանց պատճառի փոս փորեցին ինծի համար: Անսպասելիօրէն թող կորուստի մատուցին, իրենց լարած թակարդին մէջ թող, որ իրենք բռնուին, իրենք իյնան իրենց բացած փոսին մէջ ու կորսուին: Բայց ես Տիրոջ պիտի ցնծամ, իր պարգեւած փրկութեամբ պիտի հրճուիմ: Ողջ էութիւնս պիտի գոչէ. «Չկա՛յ մէկը քեզի նման Տէ՛ր, որ ազգատը կը փրկէ հօրին ձեռքէն, ազգատն ու չճաւորը կը փրկէ անոնցմէ՛ որոնք կեղեքեն զայն: Չարամիտ մարդիկ ինծի դէմ վկայութիւն կու տան, կը հարցնեն բանք՝ որ ես չեմ գիտեր: Բարիքներուս փոխարէն չարիք կը հատուցանեն, ամէն ուրախութիւն խլելով ինձմէ:

Փառք Հօրը Որդիին եւ Սուրբ Հոգիին յաւիտեանս յաւիտենից. Ամէն: ՍԱՂՄՈՍԱԳՐԲԷՆ